

Պայմանագրի Շնորհման Հայտարարություն
Միջազգային Մրցույթ, մեկ փուլ երկու ծրար մրցութային ընթացակարգով
Վարկ 2993-ARM՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Տրանշ 3
Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
Պայմանագիր No՝ T3-CW-01

Պայմանագրի անվանում՝ Թալին-Գյումրի Մ1 ճանապարհի վերակառուցում և բարելավում
71+500 կմ-ից մինչև 90+200 կմ (Թալին-Լանջիկ հատված)

1. Հայտ ներկայացրած Հայտատուներ

1. Չայնա Ռոուդ ընդ Բրիդջ Քորփորեյշն (Չինաստան)
2. Չայնա Սիվիլ Էնջինիերինգ Քոնսթրաքշն Քորփորեյշն (Չինաստան)
3. Զինջիանգ Բիքսին Ռոուդ ընդ Բրիդջ Գրուպ ՍՊԸ (Չինաստան)
4. Սինոհիդրո Քորփորեյշն ՍՊԸ (Չինաստան)
5. Իտիներա Ս.Պ.Ա. և Ռենկո Ս.Պ.Ա. ՀՁ (Իտալիա)
6. Քոնփանի Բլեք Սի Գրուպ ՍՊԸ և Զինո ՍՊԸ՝ ՀՁ (Վրաստան)

2. Հայտերի բացման ընթացքում ընթերցված գներ

1. Սինոհիդրո Քորփորեյշն ՍՊԸ (Չինաստան) 60,561,554.00 ԱՄՆ դոլար
2. Իտիներա Ս.Պ.Ա. և Ռենկո Ս.Պ.Ա. ՀՁ (Իտալիա) 70,855,983.65 ԱՄՆ դոլար

3. Գնահատված յուրաքանչյուր Հայտատուի անվանումը և գինը

1. Սինոհիդրո Քորփորեյշն ՍՊԸ (Չինաստան) 59,958,313.89 ԱՄՆ դոլար
2. Իտիներա Ս.Պ.Ա. և Ռենկո Ս.Պ.Ա. ՀՁ (Իտալիա) 70,855,983.65 ԱՄՆ դոլար

4. Մերժված Հայտատուների անվանումները և մերժման պատճառները

1. Չայնա Ռոուդ Բրիջ Քորփորեյշնը չի բավարարել «Նմանատիպ ծավալի և բովանդակության պայմանագրեր»-չափանիշը, քանի որ ներկայացված 32.000.000 ԱՄՆ դոլարը գերազանցող պայմանագրերից ոչ մեկը չի հանդիսանում նմանատիպ: Տվյալ պայմանագրի շրջանակներում իրականացված աշխատանքները ներառում են ասֆալտ-բետոնե ծածկով ճանապարհների շինարարություն, այլ ոչ թե պահանջված ցեմենտ-բետոնե ծածկով ճանապարհների կառուցում: Փաստաթուղթը, որը պետք է հավաստի վերջին 10 տարիներից որևէ մեկ տարվա ընթացքում առնվազն 140,000 մետր խորանարդ կոպճային խճաքարի շերտի իրականացված աշխատանքների մասին բացակայում է, ներկայացված է միայն Ծավալաթերթը, որը նկարագրում է պայմանագրի շրջանակներում իրականացվելիք աշխատանքի ծավալները, այլ ոչ թե մեկ առանձնացված տարվա ընթացքում կատարված աշխատանքի ծավալը: Որպես սարքավորումների սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ ներկայացվել է միայն սարքավորումների ցանկը՝ կնքված ընկերության Ղրղզստանի ներկայացուցչության կողմից, ինչը, ըստ էության, չի կարող համարվել սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև լաբորատոր սարքավորումների ցանկում բացակայում են որոշ սարքավորումներ, որոնք նախատեսված են տեխնիկական մասնագրով, ինչպես նաև որոշ սարքավորումների արտադրման տարեթվերը:

2. Չայնա Սիվիլ Էնջինիերինգ Քոնսթրաքշն Քորփորեյշնը չի բավարարել «Նմանատիպ ծավալի և բովանդակության պայմանագրեր» և «Հիմնական գործունեությունների մեջ շինարարական փորձը» չափանիշներին, քանի որ հայտնաբերվել է անհամապատասխանություն կազմակերպության նմանատիպ շինարարական փորձը հավաստող պայմանագրում, ինչպես նաև ցեմենտ բետոնե ծածկի իրականացման աշխատանքները չեն իրականացվել Հայտատուի կողմից, այլ իրականացվել է առաջարկվող մասնագիտացված ենթակապալառուի կողմից և ոչ թե ՀՁ-ի որևէ գործընկերոջ կողմից: Հաշվի առնելով, որ ցեմենտ բետոնե ծածկի իրականացման աշխատանքները չեն հանդիսանում բարձր մասնագիտացված գործընթացներ, այլ հանդիսանում են առանցքային կարևորության աշխատանքներ, ապա մասնագիտացված ենթակապալառուի կողմից ցեմենտ բետոնե ճանապարհային ծածկի աշխատանքների կատարման փորձը չի կարող դիտարկվել որպես Չայնա Սիվիլ Էնջինիերինգ Քոնսթրաքշն Քորփորեյշնի փորձառություն:

3. Զինջիանգ Բիքսին Ռոուդ ընդ Բրիդջ Գրուպ ՍՊԸ -ն չի բավարարել «Նմանատիպ ծավալների և բովանդակության պայմանագրեր» չափանիշը, քանի որ ներկայացված 32.000.000 ԱՄՆ դոլարը գերազանցող պայմանագրերից միայն մեկ Պայմանագրի շրջանակներում է ներկայացված որոշ ցեմենտ-բետոնե աշխատանքներ, սակայն որպես հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել է մեթոդաբանություն, որը չի վերաբերում տվյալ պայմանագրին, և չի կարող հավաստել, որ պայմանագրի շրջանակներում իրականացված ցեմենտ բետոնե աշխատանքները իրականացվել են ճանապարհային ծածկում, իսկ տվյալ պայմանագրի այլ հավաստող փաստաթղթերում պայմանագրի համաձայնագրում և ընդունման ակտում, ճանապարհային ծածկը նախատեսված է բիտումային (ասֆալտ) բետոնից: Փաստաթուղթը, որը պետք է հավաստի վերջին 10 տարիներից որևէ մեկ տարվա ընթացքում առնվազն 140,000 մետր խորանարդ կոպճային խճաքարի շերտի իրականացված աշխատանքների մասին բացակայում է, ներկայացված է միայն Ծավալաթերթը, որը նկարագրում է միայն պայմանագրի շրջանակներում իրականացվելիք աշխատանքի ծավալները, այլ ոչ թե մեկ առանձնացված տարվա ընթացքում կատարված աշխատանքի ծավալը: Բացակայում են որոշ սարքավորումների սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը: Հայտատուն լաբորատորիայի և բետոնափոշի վերաբերյալ միայն գրությամբ է հավաստել, որ դրանք ձեռք կբերվի, և չի ներկայացվել փոփոխված EQU ձևը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթեր՝ վարձույթի, վարձակալության կամ արտադրության պատվերի համաձայնագիր:

4. Քոմփանի Բլեք Սի Գրուպ ՍՊԸ և Զիմո ՍՊԸ» ՀԶ-ի հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքի ձևով պետք է ներկայացվեր այն բանկի կողմից, որն ունի առնվազն “BBB-” վարկանիշ՝ համաձայն Standard & Poor’s վարկանիշի, սակայն ներկայացված Հայտի ապահովման երաշխիքը տրված է “ՀայԲիզնեսԲանկ” ՓԲԸ-ի (Հայաստան) կողմից, որը չունի միջազգային վարկանիշ: Քոմփանի Բլեք Սի Գրուպ ՍՊԸ և Զիմո ՍՊԸ ՀԶ-ն չի բավարարել «Նմանատիպ ծավալների և բովանդակության պայմանագրեր» չափանիշը, քանի որ ներկայացված պայմանագրերից ոչ մեկը չի հանդիսանում նմանատիպ, ինչպես նաև Հայտատուն չի բավարարել «Հիմնական գործունեությունների մեջ շինարարական փորձը» չափանիշով սահմանված ճանապարհի ցեմենտ բետոնե ծածկի իրականացման փորձառությանը ներկայացված պահանջին: Որպես նմանատիպ (ցեմենտ բետոնե ճանապարհային ծածկի իրականացման) փորձ ներկայացված պայմանագրերից դիտարկվել է միայն մեկը, որտեղ Զիմո ՍՊԸ-ն հանդիսացել է որպես Կառավարող Կապալառու իսկ կցված աշխատանքների ընդունման ակտի համաձայն տվյալ պայմանագրով նախատեսված աշխատանքները իրականացվել է 7 այլ ենթակապալառուների միջոցով, ինչպես նաև EXP-1 ձևում ներկայացված չէ պայմանագրային արժեքի այն տոկոսը, որն իրականացվել է Զիմո ՍՊԸ-ի կողմից, հետևաբար տվյալ պայմանագրի շրջանակներում իրականացված աշխատանքները չեն կարող վերագրվել Զիմո ՍՊԸ-ին՝ որպես գլխավոր կապալառու: Ինչ վերաբերում է «Հիմնական գործունեությունների մեջ շինարարական փորձը» չափանիշին, ապա ցեմենտ բետոնյա ճանապարհային ծածկի կառուցման աշխատանքների պահանջված ծավալից 57680 մ³-ը Զիմո ՍՊԸ-ի կողմից իրականացվել է վերոնշյալ Կառավարման պայմանագրի շրջանակներում, որը չի կարող վերագրվել նշված Հայտատուին:

5. Հաղթող ճանաչված Հայտատուի անվանումը, շնորհված պայմանագրի գինը, տևողությունը և ընդհանուր նկարագիրը.

Հաղթող ճանաչված հայտատուի անվանումը՝ **Սինոհիդրո Քորփորեյշն ՍՊԸ (Զինաստան)**

Պայմանագրի գինը՝ **59,958,313.89 ԱՄՆ դոլար**

Պայմանագրի տևողությունը՝ **540 օր**

Պայմանագրի ընդհանուր նկարագիրը՝ **Թալին-Գյումրի Մ1 ճանապարհի վերակառուցում և բարելավում 71+500 կմ-ից մինչև 90+200 կմ (Թալին-Լանջիկ հատված); գոյություն ունեցող Թալին-Գյումրի Մ1 ճանապարհի արդիականացում և լայնացում՝ երկու գոտի և մեկ երթևեկելի ուղիով ճանապարհից չորս գոտի և երկու երթևեկելի ուղիով ճանապարհի:**